



ուեր են, և պիտի ներկայացնեն Լի-  
Հան-Չանիկ:

Չինական կառավարութեան ներ-  
կայանայի սոյն գաղափարին յօդուած-  
ներու սկիզբը պիտի գրուի թէ այս  
տրուած սրտումները անդառնայի են:

Յօդ. 1.— Չինաստանի Կայսերա-  
կան ընտանիքին իշխանի մը հետ Պեռ-  
ին պատգամաբարութիւն մը պիտի զըր-  
կուի որ իրեն և իր կառավարութեան  
ցաւակցութիւնները յայտնէ Կերտու-  
նական գետաբան Պարոն տը Բէթլէրի  
սպանտան համար: Ասիկէ զատ Չինա-  
ցիները Պ. Բէթլէրի սպանտուած տե-  
ղը արձան մ'ալ պիտի կանգնեն ու-  
րուն վրայ Կայսրը Լատիններէն, Կեր-  
տաններէն, և Չինացիներ արձանագրու-  
թեամբ իր ցաւակցութիւնները պիտի  
յայտնէ գործուած ոճրին համար:

Յօդ. 2.— Մահուան պիտի գա-  
տապարտուին Սեպտ. 23ին ցոյց տրուած  
հակաբողոքական շարժմանց պարա-  
գրուները: Նոյնպէս անոնք որ յետ  
այս և կառավարութեանց գործակալ  
ները կրնան ցոյց տալ:

Յօդ. 3.— Չինական Կառավարու-  
թիւնը երկու տարի շարունակ Կայսե-  
րական սովորաբարութիւններ պիտի  
փակցունել տայ ամեն նահանգի մէջ,  
սպառնալով որ եթէ ո՛ր և է անհատ  
Պաշտօններու ազանդին մասնակցի մահ-  
ուան պիտի դատապարտուի թէ ամեն  
նահանգի փոխարաններն ու պաշտօն-  
եայները պատասխանատու պիտի ըլ-  
լան եթէ իրենց իշխանութեանց տակ  
զանտած երկիրներուն մէջ ո՛ր և է  
հակաբողոքական ցոյց կատարուի, կամ  
գրուած նոր կանոնները չ'գործադրուին,  
հակառակ պարագային պաշտօնանկ  
պիտի ըլլան անոնց տիրիչ գործի  
անցնելու:

Յօդ. 4.— Չինական Կառավարու-  
թիւնը Քաւիչ-արձաններ կանգնել  
պէտք է տայ այն ամեն եւրոպայի-  
ներու և ոչ-եւրոպայցիներու գերեզ-  
մաններու տեղերը, որոնց գերեզման-  
ները պղծուած են խուճովութեան ժա-  
մանակ:

Յօդ. 5.— Յոն-Լի-Նոմէնը տէրու-  
թեանց ապիջ հրամաններուն համա-  
ձայն պիտի վերանորոգուի:

Յօդ. 6.— Չինաստան՝ Տերու-  
թեանց և մասնաւոր անհաններու հա-  
մեմատական տուգանքներ պիտի տայ  
եզո՞ծ վիսաններուն համար:

Այդ տուգանքներուն մէջ պիտի ըլ-  
լան նաև այն Չինացիներու վնասը  
որ Չինաստանի մէջ զանուսը օտարա-  
կաններուն ծառայութիւն մատուցե-  
ր են:

Յօդ. 7.— Չինաստան զորուէն  
զէնք չ'պիտի գնէ: Գինոր տնօրինութիւն  
տէրութեանց:

Յօդ. 8.— Տէրութիւնները իրենց  
գործակալութիւնները պաշտօնանկելու  
համար մնայուն զօրքեր պիտի պա-  
հեն Գիւան: Գործակալներու ընա-  
կած թաղը՝ ուր Չինացիները չ'պիտի  
բնակին, պաշտպանութեան տակ պիտի  
ըլլայ:

Յօդ. 9.— Թու-քուի և Պիւս մետց  
եալ բոլոր ամբուլթիւնները որոնք կըր-  
նան Բէթլէրի և ծովի միջև եղած հա-

զորակցութիւններու արգելք ըլլալ  
պիտի վերանան:

Յօդ. 10.— Տէրութիւնները մայրու-  
քաղաքին մէջ, տեղեր պիտի սրոշեն  
և այդ տեղերը զօրք պիտի մնայ որ-  
պէսզի գործակալութեանց տեղին  
և ծովին միջև եղած հաղորդակցու-  
թեանց ազատութիւնը ապահովեալ  
մնայ միշտ:

Ինչպէս կը տեսնուի Տէրութեանց  
«անդառնայի» սրտումները թէ և մի-  
քանի յօդուածի մէջ անխօսուած են,  
բայց ասով արդէն կ'ապահովեն իրենց  
գոյութիւնը հոն, և այնպիսի պատժով  
մը կը պատժեն յանցանաւորները, որ  
Չինացոյց համար խիստ ծանր է,  
— յանցանորներու գլխատու մանա-  
ւանդ:

Լրագիրները, սակայն, խտիւ կը  
քննադատեն այս պաշտանները: Այդ-  
լրագիրներէն մին՝ «Տէլիք» Թէլէկրա-  
ֆիքս պայմաններու և պահանջուած  
տուգանքներու խիստ ծանր ըլլալը շեշ-  
տելէն վերջ կ'ըսէ: «Բանի որ Տէրու-  
թիւնները նպատակ ունին, ամեն վնա-  
սին հատուցում պահանջելու Չինաս-  
տանէն, ըլլայ զինուորական ըլլայ ան-  
հատական, աւելի աղէկ կ'ընեն Տէրու-  
թիւնները և թէ Չինական Կայսրութիւ-  
նը մէջ անդամէն իրենց մէջ բաժնեն»:

Գ Ի Ի Տ Մ Ը

Eureka! և ինչ գիւտ, Աստուած իմ,  
ինչ գիւտ:

Եթէ ասոր վրայ ալ Հայ մամուլը ինծի  
արձան մը չի կանգնէ, ո՛հ, այն ատեն  
պիտի համարուի թէ մարմարանի կտոր մը  
աւելի յարգի է քան մարդ ըսուած արա-  
բածը, որուն համար ինչ մը ապո շնոր կը  
պնդեն թէ արարչագործութեան հրաշակերան  
է... կին ըսուած կ'ախի ետքը, չի մոռ-  
նանք:

Արձան մը կանգնեն թէ չի կանգնեն,  
գիւտս չի գործիր սակայն օգտաշատ գիւտ  
մը ըլլալէ, բանի որ մարդկութեան ամենէն  
շատ շարժարուած, ամենէն շատ զրկուած  
և ամենէն շատ հարստահարուած մասին  
ժառանգու պիտի գործածուի:

Իստոր Հայ լրագրագետներու երամին  
վրայ է, անշուշտ կը գուշակէր:

Ինչո՞ւ համար գտնուել, օրինակի համար,  
Ալեքիկան, վառօղբ, անթել հետադիւրը, պե-  
տի ներկը, ֆօֆօլիաֆը, շոգեշաքժ մեքե-  
նան, սոփց կոշտերու դարմանը, արհես-  
տական ակրան, անթիքիքիքը, ապստիկ  
գրութիւնը, միքրօպը, խաւարատէ տունը,  
կեքարական ըլլալը, հիւսիսային բեւեռը,  
Պրատն Սէքարի գրութիւնը, կիներու ներ-  
կը և ազամանդին մերկը ու անդին ոչ որ  
մասձեր Հայ լրագրութեան վիճակը բար-  
ւաբելու պէտքն վրայ:

Ասանց այդ դարմանը գտնուելու ասա-  
նըններուրը գարը չէր կրնար վերջանալ:

Եւ ասանկ ալ եղաւ:

Մինչև երկի գիշեր մտքս անգամ չէի  
անցընել որ կրնայի օրին մէկը այդպիսի  
անփոխարինելի ծառայութիւն մը մատու-  
ցանել իմ սիրելի պաշտօնակիցներու:

Այն վայրկեանն որ այս գաղափարը մտ-  
քիս մէջ ծնունդ առաւ, ես զիս անելի մեծ  
կարծեցի քան Գոլումպոս, Էստրիս, Բաս-  
թիւս և ամբողջ մնացածները:

Իմ գիւտս՝ դրամ կամ համբաւ վաստը-  
կելու չ'պիտի ծառայէ, ուստի բարոյապէս

խիստ աւելի նշնաւոր Լրան վերայիշեալներուն  
ըրածները:

Ընչարագութեան կասկածս անգամ չի  
կայ իմ գիւտիս մէջ, հետեւաբար նախական,  
անսպակ և սուրբ է ան... Գ/ԱՏ ԳՕՏ-  
ՎՅՄ... ին պէս:

Մինչև հիմա իմ վրայ խօսեցայ, չէր  
կարծեր որ ընչ մըն ալ բրած գիւտիս վրայ  
խօսելու ժամանակը եկած է:

Ուստի ներեցէր որ սխտիմ:

\* \* \*

Հայ լրագրագետներու ամենէն շատ սրբ-  
տին և շեղբունը գրած քանի մըն է: Չի  
վճարող բախտնորը: Դուր ինձմ առաջ  
ըսիր, տեսէր:

Լաւ, ասոր դարմանը: Բիւզանդ Գէլէկան  
անգամ գտած չէ, ալ երևակայեցէր:

Ասոր դարմանը, բայց այդ պարզ երե-  
զի մըն է Գալտմպոսի հակիթին պէս: Մի-  
նակ ընչ մը մտածելու է. բան մը որ բ-  
րած ըլլալու հարցս եմ այսօր:

Ահա ինչ մտածեցի ես:

\* \* \*

Մինչև հիմա ամեն լրագրագետ, ասանց  
բացատրութեան, չէ գիտցած թէ որ դատա-  
կարգի պատկանող, ինչ գաղափարի տէր,  
և կամ ինչ տեսակ բանէ ակտիւ մարդե-  
րու զրկելու է իր թերթը:

Ես գիտեպաններ գիտեմ որ կ'ստանան  
հասիւսական հանգէս մը, մինչդեռ ինչո՞ք  
չեն գիտեր թէ ո՞ր է Հայաստան. վաշխա-  
տուններ ալ տեսած եմ կրօնական թերթերու  
բաժանորդ: Վախ չի կայ, այդ երկու դա-  
տակարգն ալ կուտ մը չէ տուած իր ոտա-  
ցած թերթին համար. ասոր ապահով կըր-  
նար ըլլալ:

Մենք թերթերը կը զրկենք և կը դա-  
հանջենք որ վճարեն մեզի. բայց ինչո՞ւ,  
եթէ ստացողը որեւէ կիրպով օգուտ մը չի  
աննար մեր մրտած թուղթին:

Ամեն մարդ իր ճաշակին յարմար և իր  
գաղափարներուն ներդաշնակ թերթի մը  
գրամ կուտայ. տրամաբանական չէ այս,

Այս ճամբով կը հասնիմ սա եղբակա-  
ցութեան թէ՛ լրագրագետները իրենց կար-  
գացողները ընտրել գիտնալու են. այսպէս  
ինչո՞ք ինքնին կը լուծուի:

Հիմայ, քանի որ այս գիւտը ես բրած  
եմ, կարծեմ թէ ուրիշ մը աւելի ինծի կը  
վայելէ բացատրել իմ յարգոյ պաշտօնա-  
կիցներու, թէ՛ ինչ ընթացք բռնելու են  
իրենց թերթերու վճարող բաժանորդները  
նկու համար:

Ահա՛ մենէն կարճ ճախար:  
Թող այսուհետև զրկուին՝  
Արագամայճներուն՝ Շարժում.  
Կոյրերուն՝ Լոյս.

Յոյներուն՝... Բիւզանդիան.  
Իրենց ամուսններին աթ սարիէ ի վեր  
լուր չ'անուգներուն... Անհատներ.  
Վից Պետութիւններուն Արեւելի.  
Արհեստով ազգասէրներուն՝ Հայրենիք.

(Սիւրիկայիներ, չի շիթթիներ):  
Նոր հարսերուն՝ Փոռից.  
Խաւարեալներուն՝ Արշարդոյս.  
(Արարատեանը, բնականաբար):  
Կնատը Պարսկաներուն՝ Անահիտ.  
Պշտակը ազգիկներուն՝ Հայրենի.  
Պայմանաւաճը լրացած մարհակ ունե-  
ցողներուն՝ Նոր-Օր.

Հոգատէրներուն՝ Մշակ.  
Տպագրական մեքենայ չունեցող լրագրա-  
պետներուն՝ Մամուլ.  
Ասանց մասնայի չի բնացող տշոյ՝ Բագ-  
ւնայեպ.

Ութսունամեայ ծերերուն՝ Նոր կեանք.  
Գործեզմաններուն՝ Մարիլի.  
Ազգի փնտաղներուն՝ Բիր... ակն.  
Վաշխատներուն՝ Իրաւունք.  
Անտարներուն՝ Բաւնաւ... յ.  
Ահաւասիկ ձեզի գիւտ մը որ որքան շէս  
այնքան ալ ազգաշէս է:

Յ. ԱՎՓԻԱՐ

ԿԱՐԳՅԱԼ առաջիկայ Չորեք-  
շաբթի օրուան «Նոր-Օր» մէջ Տ. Յ.  
ԱՎՓԻԱՐԻ սրամիտ և նուրբ զընով  
ուրուսպուած Մանոթ Գիւլիտու ա-  
ռաջիկը՝

ՉԱՐԵՆՆ ԵՐԿԱՅԻԸ

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ԸՆԴԷ. ԺՈՂՈՎ

Հայ Լսարան-Ընթերցատուն ընկե-  
րութեան:

ՏԱՐԵԿԱՆ Զ. ՆԻՍՏ

Հայ Լսարան-Ընթերցատունը ԸԿԵ-  
րութեան Ընդհ. Ժողովոյ տարեկան  
վեցերորդ նիստը տեղի պիտի ունե-  
նայ վաղը, կիրակի 23 Նոյ. 1900  
ժամը 2 ու կէսին՝ կէս օրէն յետոյ  
«Միութիւն» տպարանի շէնքին մէջ  
յԱպտին:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընթերցում և վաւերացումն  
նախորդ նիստերու առեւտագրութեանց.  
2. Ընտրութիւն Գործ. Ժողովոյ  
մնացեալ անդամոց:

Դիւանա յատկապէս կը ինչո՞ք բո-  
լոր ընկերներէն որ հաճին մասնաւոր  
ճիշդ որոշեալ ժամուն ներկայ ըլլալ  
ոյն կարեօր նիստին:

Ի գիւմայ Ընդհ. Ժողովոյ Հայ Լը-  
սարան-Ընթերցատուն ընկերութեան:

Առեւտագրու Ստանապոս

Յ. ՄՕՐԶՊԱՆԱՆ Ը. Կ. ՊԵՐՊԵՐԱՆ  
24 Նոյեմբեր 1900

ՇՆՈՐՀԱԿԱՆԻՔ

Տ. ՅԱՆՈՐ ԿՕՐԱՊԵՏ կը փութայ  
իր խորին շնորհակալութիւնն յայտ-  
նել Ազգ. Պատ. Վարչութեան, բոլոր  
հոգեբոր ներկայացուցիչներուն, և ամեն  
անոնց, որք հաճեցան ներկայ գըտ-  
նուիլ իր երջանկայիշատակ հօր՝

ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ԱՆԱԳ ԲԱՅԱՆԱՅԻ

Յուզարկուարութեան հանդէսին և  
յայտնեցին իրենց ցաւակցութիւնը:

ՇՆՈՐՀԱԿԱՆԻՔ

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԽՈՍՐՈՎՈՒՅԻ ՄԵՐ-  
ՃԱՆՃԱՆ, ՏԻԱՐ ՌՕՏՈՂՅ ՄԵՐՃԱՆ-  
ՃԱՆ, ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳԱՌՆԻԿ ՄԷՇ-  
ՏՈՒՏՃԱՆ, ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՅԱՆՈՐ  
ՈՍԿԱՆ. ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՄԻԿՐՈՅ ՇԱՆ-  
ՃԱՆ, ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՍՕՖԻԿ ՊԵՐՊԵՐ-  
ԵԱՆ, ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՐՕՏԻՆԻԱ ՓԱՓԱՉ-  
ԵԱՆ կը փութան իրենց շնորհակա-  
լիքը յայտնել այն ամեն ազգակա-  
նաց և բարեկամաց որք հաճեցան  
ներկայ գտնուիլ

ՏԻԱՐ ՍՏԵՓԱՆ ՄԵՐՃԱՆՃԱՆԻ

յուզարկուարութեան ախար հանդի-  
սին, և արտայայտեցին իրենց ցաւակ-  
ցութիւնը:

Տեսնել չարորդ երեսը ի նպաստ որբերու կատարուած Սուտանի հանգանակութեան արդիւնքը զոր Որբատիրաց ընկերութիւնը կը պարտի Տ. Ս. Օտապաշեանի անձնուէր շահերուն :

**ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒՄՆԵՐ**  
Վաղը, կիրակի գիշեր, Նոյ. 23, ժամը ճիշդ 8 1/2-ին Տեղույս Շարա Ապտ-Իւ-Ազիզի Եզիպտական թատրոնին մէջ, Պէնսիլանի հայ գերասանական խումբը պիտի ներկայացնէ նշանաւոր թուրք բանաստեղծ Գէմալ Պէյի ԹՐԲՈՒՀԻՆ, կամ ԿՐԿՆԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ ՀՏԵԻԱՆՔԸ թատերադրութիւնը, ի նպաստ Պ. Երուանդ Պէնսիլանի :

**Ե Գ Ի Պ Տ Ա Ց Ի Ն**

Ասիկ եօթ տարի առջ երբ Եզիպտոս եկայ կ'ըսէին թէ՛ Եզիպտացին վերջին ծայր խելացի է. երկուստորդ եղած ատենը ամեն բան զարմանալի դիւրութեամբ մը կը ստիբի, իսկ երբ որ չափահաս կ'ըլլայ այլևս չը կրնար բան մը ստիբիլ :

Ասիկ միշտ լսեցի ու լսեցի . . . ինչ որ իրողութիւն մ'ը գործողարար :

Եւ երբ այս տխուր երկոյթին պատճառը կը հարցունէի, ամենայն պազարինուութեամբ «Երկրին կլիմայէն է, որովհետեւ կլիման՝ բնակիչները անարիւն կ'ընէ» կ'ըսէին :

Բայց կարելի է գիծ մնալ այսպիսի հիւանդութիւնէ մը՝ առանց անոր դարմանը խորհելու :

Բժշկական համաժողովներ իրարու ետեւ կը գումարուին ու կը գումարուին մարդու թիւնը տառապեցնող ցաւերուն դարման զբոնելու համար, և ինչու մէկը չ'իտրհիբ երկրազնդիւն ամենախելացի ցեղերէն մին՝ արեւելցին տառապեցնող այդ հիւանդութիւնը չ'ընէր. հիւանդութիւն մը որ հազար անգամ աւելի տխուր է միւսերէն, քանի որ անոր գործը բարոյականի հետ է ուղղակի :

Բժիշկ մը երբ հիւանդին դիմացը կը կենայ երկու հարց կը ներկայանայ իւր առջեւ. նախ հասկնալ հիւանդութիւնն և անոր պատճառը, երկրորդ՝ զայն բժշկելու համար տարբեր զեղը որոշել :

Հիւանդութեան պատճառը կլիմային շերտութիւնն է, կը կրկնեն, որ անարիւն կ'ընէ Արեւելցիները :

Շատ բնական է թէ Երուպացիները մտածած են ասիական, որովհետեւ կլիմային շերտութիւնը գիբնը ալ կը սկիւրացնուի :

Խորհելու է սակայն թէ՛ ամեն երկիր իր տարբեր ներգործութիւնը կ'ունենայ իւր ժողովրդեան վրայ և տարբեր երկիրներու մէջ ծնունդներուն բարեխառնութիւնը երբեք իրարու չ'անմանիր : Հետեւաբար մեր, Երուպացիներու Եզիպտոսի մէջ զգացածը, չկրնար ճշմարիտ գաղափար մը տալ միշտ անոր կլիմային համար ստեղծողներուն ըզգացածին վրայ : Ուրեմն մենք ալ մեր ուզած կերպով չափելու ձեւեր չենք :

Ո՞վ կրնայ համարձակիլ ըսելու թէ այս գեղեցիկ, արգասաւորիչ արևը անարիւնացուցած էր հին Եզիպտացիները . . . երբէք :

Հին աստիւնները հիմակուան պէս՝ արևին ճառագայթները սկիւրացնող բոյսեր ալ չը կային (բնական է թէ բոյսերը և ծառերը միշտ արևի շերտութիւնը կը նուազեցնեն), և արևը այնքան զօրաւոր ըլլալով հանգրձ փոխանակ անարիւնութիւն պատճառելու այն

ասիկ ժողովրդեան, բնահաստակը ներգործած էր անոնց մարմն և մարմնոյն վրայ. ո՞չ ապաքէն հին Եզիպտացիներն են որ գիտութիւնները և արուեստները ի ընթացակարգին ուրիշ բովանդակ ակեղբորը կ'օգտուի ցայտօր :

Ամեն տարի աշխարհի չորս անկիւններէն խելացի մարդիկ, ճանապարհորդներ գունդազունգ Եզիպտոս կը խուժեն ոչ թէ միայն իր ձեռնային կլիմայի մեղմութեանը տակ գեղեցիկ օրեր անցնելու, հապա նաև արեւին այս առաջին և նախապատմական գաւախներուն ստեղծած հրաշալիքներու նրշխարներու, բուրգերու ելնի վրայ սքանչաւ նայու :

Միթէ կիրորոյս, Յունաստանի հիմնադիրը Եզիպտոսէն չէ որ տարած է Յունական արուեստը :

Ո՞չ. Արեւելցիին՝ այսինքն Եզիպտացիին հիւանդութեան հիմքը կլիմայէն չէ. բացարձակ է ասոր պատճառը. նախնական դաստիարակութեան չ'օգտութիւնն է այն :

Բացարձակապէս ստոյգ իրողութիւն մը կայ. այն է թէ՛ մարդկանց արատաբար գործերը մեծաւ մասամբ իրենց նախնական կրթութեան պտուղն են :

Արեւելցիներու մէջ ազրած ըլլալու է մատուց հասակի գաստիարակութեան չ'օգտութեան և կամ գոյութեան վրայ լաւ գաղափար մ'ունենալու համար : Մանուկը ստանկի պէս կը մեծնայ. իր շուրջը զբոնողները վարկեան մը չեն գրադիր իրմով. կը կերցնեն, կը խմցնեն և . . . կը հագուեցնեն : Կենդանի մը պէս կը խնամեն գնալ եղածն ալ այս է, ըլլալին ալ :

(Շարունակելի)

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Նոյ. 22 թիւ հեռագրի մը համաձայն Պ. Բրուկէր Մարտիկա հասած և ժողովրդային համակրական մեծ ցոյցեր եղած են :

**ԶՈՒՅՑԵՐԻ ԱՅԷՆ** պատգամաւորութիւն մը գէպ ի Մարտիկա ուղեորած է, Պ. Բրուկէրը գիտաւորելու համար :

Յիշեալ պատգամաւորութիւնը Հարաւային-Ալպիկէի հասարակապետութեանց նախագահին համակրական նամակներ պիտի ներկայացնէ, որոնց ներքեւ հաղարար ստորագրութիւններ կան : Կ'ըսուի թէ պատգամաւորութիւններուն ետեւէն մարդիկ գայեր են մասնաւորապէս Պ. Բրուկէրը Զուիցերիայ Դաշնակցութեան մայրաքաղաքը առաջնորդելու :

Ինչպէս ծանուցել էինք «Նոր-Օր»ի թիւերէն միայն մէջ, Զուիցերիայ թրանսվալի խնդրոյն միջամտիլը հետզհետէ հաստատութիւն կը գտնէ :

«ՏԷՅԻ ԼԻՔՍԱՐԷՍ»-ի Պէրլինի թըզթակիցը կ'իմանայ թէ Հոլանտան փափաք յայտնած է Գերմանիային՝ յանուն Պ. Բրուկէրի և հալածուած Պօէրներուն՝ թրանսվալի հարաւային-արեւմուտքէն մաս մը գնել :

**ԼՈՐՏ ՍԱԼԶՊԸՐԻ** իր վերջին ճառին մէջ Միացեալ-Նահանգի նախագահական ընտրութեանց վրայ խօսելու ատեն ըսած է որ Պ. Մաքքլինի վերընտրութիւնը քաղաքակրթութեան մէկ յազթանակը և ազգին պատիւ կարելի է նկատել :

—Պէրլինէն Նոյ. 21 թուականու եկած հեռագրի մը համաձայն, Ռէյ-

լաթուի մէջ Պրիստոտանի գործերու վրայ եղած միժարանութեանց միջոցին Պիլալի կոմսը Գերմանիոյ Կ. յիւր իր զօրաց խօսած ճառին բարձրական պատասխանատուութիւնը ի նշան վրայ առած է :

**ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ**

**ՍՈՒԼԹԱՆԸ** հրաման ըրեր է որ Պուլվարիոյ և Արեւելեան Բուսնիլի մահմետական գաղտնեւոր վարժապետներուն կրկին ամական վճարուի :

Սուլթանը օտար երկիրներու մէջ գտնուող մահմետական վարժապետներուն՝ իր երկրէն աւելի հոգ տարած է առջի օրէն, սրպէսզի մահմետականութեան ազդեցութիւնը օտար հողին վրայ ևս անչէլ մնայ :

**ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆԻ ՍԻՐՏԸ.** — Աթէնքէն կը գրեն թէ՛ Միսոսլանդի մէջ գտնուող Ս. Սիբիլիոն եկեղեցիին վերաշինութիւնը սկսեր են Այս այն եկեղեցին է որ երբ 1823ի տունները Լորտ Պայրըն Յունա թըքական պատերազմին ժամանակ Յունաստան գնաց ու պատերազմին մէջ մեռաւ, Յոյները անոր սիրտը կուտի մը մէջ գնելով հան թաղեցին : Թուրքերը երբ այդ քաղաքը առին, եկեղեցին քանդեցին ու կուտն ալ փլուտակներու մէջ անյայտացաւ : Հիմա որ եկեղեցոյն վերաշինութեան սկսեր են, ամեն վնասուածք կ'ընեն Լորտ Պայրընի սիրտը գտնելու համար :

**Տ Ե Ղ Ա Կ Ա Ն**

Ն. Բ. Խալիլը չորեքշաբթի իրիկուն Ալեքսանդրիա մեկնեցաւ, ուր պիտի մնայ շաբաթ մը :

—Ն. Վ. Պօլոս փաշա նուպար որ Թուրք փաշայի հետ Յէյլում գացած էին, Դահիլէ վերադարձած են :

—Ամօյս վերջերը 250 անգղիական զօրքերէ բաղկացեալ շտաբ մը Սուտան պիտի մեկնի, իւր պահանջը :

—Տեղական կառավարութիւնը որու շէր է եկող տարի 22,000 եփու սուկայ գումար մը յատկացնել երկրագործական նոր գաղտնի մը շինութեան համար : Ե՛հարկ կ'իլլէ բանտին մօտերը պիտի ըլլայ :

—Տեղական կառավարութիւնը ի մէջ սլոյց ոչոշերէ որ եկող տարի 10,000,000 — 12,000,000 եփու սուկայ օսպմամթերը գնուի :

—Օսմանեան «Հօտէյտա» շոգենուր որ վերջերս Բօր-Սայլու կը զբոնուէր, 1117 սպայ ու զինուորով Պասլա երթալու համար, մեկնած ատեն 40ի չափ զինուոր ծովը նետուած են որպէսզի չերթան :

—Սուտանի գրաւումէն յետոյ Եզիպտական բանակի զօրաց թիւը 12 հազարէն 22 հազարի բարձրացած էր. բայց վերջերս արուած որոշման համաձայն՝ Եզիպտական կառավարութեան բանակը զարձակ առջի պէս, 12 հազար զօրքի պիտի իջեցուի ինչ-

պէս որ արդէն Սուլթանի ֆէրմանն այ նոյնը կը պատահարէ Եզիպտոսի համար, ուրիշ աւելի զօրք պահելու իրաւունք չունի :

—Սուլթանը մինչև ցարգ կարգ մը Եզիպտացիներու Պէյլիկները և շէքանչաններ շնորհած է. առանց գտնէ անոնց ինչ կարգի մարդիկ ըլլալուն վրայ Բ. Կրան կողմէ բացաւորութիւն պահանջելու :

Ն. Բ. Խալիլը նկատելով որ անոնց մէջ զանաւոր են այնպիսիներ որ անծանօթ, ո՞վ ըլլալին յայտնի չէ, իր ձեռքովը նամակ մը գրկեր է Սուլթանին և խնդրեր է որ այսուհետեւ այդ շնորհները ըլլալին իրեն կողմանէ նշանակուած անձանց միմիայն :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՏԱՆԱՌՈՐԷ**

ՀԱՒԱՐԵՍՑ ԱՐԺ. ՏԷՐ ԱՒԵՏԻՍ Վ. ԳՈՎ. ՀԱՆՆԷՍԵԱՆ

Լաւ է մարդ անբուն մընայ, Բան թէ ահեղ երազ տեսնայ. Հանգիտ ու գոհ սիրտ ունեցիր, փառքն ու պատիւ տեղը մընայ :

Տընաբանը տուն չ'ունենար, Չար սիրտ մարդը քուն չ'ունենար, Նեղսիրտ մարդը գոյն չ'ունենար, Չարը լաւ անուն չ'ունենար :

Չարին բերանումը յիշոց, Սըրտումը կըրակ ու բոց, Կարելի է, ու չը լինի, Ճակատումը մէկ երկու խոց :

Անըզգամին տեղ չը կայ, Ո՛ր տեղ նըտաի, նեղ կուգայ, Անմեղին՝ ամեն նեղութիւն իրրե մեղը ու եղ կուգայ :

Թէ Աստուծոյ մարդ չես եղեր, Ստատանաի մարդ մի՛ լինիր. Թէ զրժոյքէն մարդ չես խըլեր, Դրժոյքը մարդ մի՛ տանիր :

Գաղանիքը զաղտ պահողին Ալբի, մընայ, ասացին. Գաղանիքը դուրս հանողին Կորի՛ր, գնա՛, ասացին :

Ոսկի արծաթ ու ճեղակներ մըսեցիր, Չարքատացար այնքան, ո՛րով, Երբ ժամանակ ու պատիւը մըսեցիր, Եղար մի անառակ որդի :

Բարեկալն ինչ սը ըզգայ, Լաւ բարեկալն ալ այն կ'ըզգայ, Մի՛ ասեր թէ այդ զարմանք է. Սըրտէ լ սիրտ ճանապարհ կայ :

Թէ բարեկամ ունիս հազար, Շատ չէ՛ սակաւ, ո՞վ եղբայր, Մի՛ թշնամի թէ ունեցար, Բիշ չէ՛ շա՛տ է, ո՞վ եղբայր :

Թշնամի էր՝ զընաց եկաւ, Ինձի բարեկամ դարձաւ. Բարեկամ էր՝ չըզնաց չ'եկաւ, Ինձի թշնամի դարձաւ :

Սուտ բարեկամ Եւ սուտ դրամ, Ո՛րն ալ ճանչես կամ գտնես, Նայէ՛ որ շուտ մէկի թողնես :

Ես փաշա, Դուն բոշա, Բարեկամացանք, Հաւասարեցանք :

Բարեկամը մարդուն գլխին կը նայի.  
Իսկ չարիամբ մարդու ոտքին կը նայի,  
Խեղացին՝ խելքին, բարբին ու վարբին,  
Իսկ յիմարը զըրտի տեսքին կը նայի:

Թե՛ թըշնամից մըրջին լինի,  
Մեղաւոր ես նե՛ վարեցի՛ր.  
Թե՛ թըշնամից առիւծ լինի,  
Դու անմեղ ես, անվար կացի՛ր

Հիւր գրնաս՝ ուր որ կանչեն,  
Չը կենան երկար առնեն,  
Հիւրը չխտորձիւր հիւրեն,  
Տանուաւրն և ոչ մեկէն:

Թե՛ զընացիք մէկին տունը,  
Լաւ նայէ երեսի գոյնը,  
Թե՛ վար նայեց, ձայնը քաշեց,  
Շուտով աւուր ետքի ոգջոյ՛ր:

Երթաւն երթամ ինչ անեմ,  
Ներս որ մըտնամ ինչ ասեմ.  
Մեր շունն հոս կացին բերան,  
Միթէ ա՛յս պէտք է հարցընեմ:

Թե՛ ուրիշին փոս կը փորեն,  
Նայէ՛ որ շատ չը խորեն.  
Որ երբ դու մէջ զըրբուխս,  
Ոգջ մընաս, սոջ դուրս ելնես:

Թե՛ ամիսը մէկ մի գաս,  
Կուտես գաթա փախաւս.  
Թե՛ որ օրը մէկ մի գաս,  
Կուտես բոթակ փախաւս:

Ապերախները շատ ես զրտած,  
Ամենին մի՛ գոգոհար.  
Յայտնի նըշան առ թեզ համար,  
Որ բաւթիւն շատ ես արած:

Ո՛ր տեղին որ հաց ես կերեր,  
Այն տեղը քար չը ձըգե՛ս.  
Ո՛ր տեղին որ շար ես խըմեր,  
Այն տեղը վար չը թըքե՛ս:

Հա իկը շուր որ խըմէ  
Աչք երկինք կը վերցընէ.  
Որ փառք տայ ըստեղծողին.  
Ինչ և թեզի ստիբեցընէ:

Ա՛խ, սասանին մին տեսնեմ,  
Երեսին լաւ մը թըքնեմ.  
Ոչ սասանան տես ե՛րբայր,  
Ոչ ալ երեսին թըքիր:

Բարկ քացանն իր ամանին,  
Կը բերկ կ'ասան վընաս.  
Տէրն հեղոց տայ երանին,  
Լայնասիրտ եղիր, ապրիս մընաս:

Աշխարհըս լայն արձակ է,  
Բայց սիրտըս նեղ, ինչ օգուտ.  
Ճամբան հանդիստ շիտակ է,  
Կոշիկըս նեղ, ինչ օգուտ:

Ի ՆՊԱՍՏ ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐ.

Նախորդ 2 ցուցակներէն	3666
Ա. Ն. Ուրիտու, Թէ՛լֆ. Հալֆա	100
Խրիսթոս Չալա, Խարթում	100
Նէյսըն պէյ, Պէրպէր	100
Գալէփեան եղբարք, Ասիոթ	87
Ս. Շանքո. Ապու Համէտ Սուտան	50
Ա. Ռոսինի, Ասուան	50
Մուհամմէտ Իպրահիմ, Ասուան	50
Ալէքսանտրովիչ, Շէլլալ	40
Պ. Անթոնիօ	40
Անանուս(Իտալացի)»	40
Իպէնտէր Կլասիուս Թէ՛լֆ. Հալֆա	30

Չանարա եղբարք, Գէրմա Սուտան	20
Հաննա Ճէտովա, Ռէզէուար »	20
Շ. Փափալէքս, Ասուան	20
Ա. Մարանտոս »	20
Մուհամմէտ Իպրահիմ, Ասուան	20
Տիգրան Միթարեան, Ասիոթ	20
Մորսի Մուհամմէտ, Ասուան	15
Ա. Համէտ » Շէլլալ Ասուան	10
Անանուս, Ռէզէուար Ասուան	10
Անանուս, Լուքսոր	10
Յակոբ Մարգարեան	10
Հայ մը, Գահիրէ	10
Երկու Յոյներ, Ռէզէուար Ասուան	10
Անանուս »	5
Մուհամմէտ Հասան, Շէլլալ	5
Ա. Համէտ Արի, »	5
Ա. Համէտ Ալի, Գէրմա Սուտան	5
Կարապետ Էրմէքեան, Ասիոթ	5

Գումար 4573

Յանուն Որբասիրաց ընկերութեան՝  
յարգանք և երախտագիտութիւն ա-  
մէն ազնիւ նուիրատուներուն, որոնց  
անունները պիտի հրատարակուին ա-  
ռաջիկայ ամսնորի առթիւ, եւրոպա-  
կան լեզուաւ և եղանակաւ մ'որ ա-  
նակնկալ մը պիտի ըլլայ ամենուն հա-  
մար:  
Նուիրատուութեան ցանկը շարունա-  
կելի է. փափաքելի է սր, օտար յար-  
գելի անուններու քով ունենայինք  
նաև նուիրատու ազգայիններու պատ-  
կաւելի թիւ մը, թէպէտ մեր փափա-  
քէն բաւարովին վեր է ծանրանալ ու-  
ղել անվերջանալի հանգանակութիւն-  
ներով ևն. արդէն չափազանցօրէն  
ծանրաբեռնուած հասարակութեան  
վրայ:

Նիթապաշտ մարդկութիւնը շատ  
կը ձանձրանայ, ինչքան սլ մարդա-  
սիրական և սուրբ եղած ըլլայ հան-  
գանակութեան մը նպատակը:  
Գահիրէ 22 Նոյեմ. Ս. Օ.

Le Gérant J. MUNIER  
Տպա. «Միւրիւն».—Թ. Ս. Փափաղեանի

ՊԱՆԳ ԼԻՍՆԷԶ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ  
Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրածանօթ գրամատունը,  
այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի  
գործակալն ալ, Տ. Մ. Կլարիչ Սօսյեան,  
որ իւր հրապարակային ցոյց տուած  
պարկեշտ գործունէութեամբն ամե-  
նուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ.  
թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղա-  
քապետութենէն պաշտօնապէս վա-  
ւերացուած փոխանորդագրի համա-  
ձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի  
միջոցաւ ամեն տեսակ գրամական և  
Գուէտի Ֆոնտիչէի, վիլ աը Բարիի և  
Գաղղիական ամէն արժեթուղթերու  
գործողութիւններ, գանձումներ, յիմա-  
կան չնչին գումարի մը խնայողու-  
թեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն,  
պտհետի բաժնեթուղթ մը, վիճակա-  
հանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին դիմել Նիւ-  
պասի վրայ փաստարան Ռարթուքիի  
գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ զըր-  
կել հետեան հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ  
Ի ԳՅՀԻՐԷ

ԱՏԱՆԱՐՈՅԹ  
Պ. ՆԻԿՈՂԻՍՏՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ,  
Գաֆէ տը ըս Պուրսի կից, Բ. յարկ,  
թիւ 9 գասիկոնը:

Կը բժշկէ բերնի և ախույի ամեն  
տեսակ հիւանդութիւնները: Աղքատ-  
ները ձրի կը դարմանէ ամեն օր, ա-  
ռաւտեան ժամը 8էն 9:

ՊԵԼԱՅԱՆ-ԹԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.  
ԱՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՐԱՎԱԿԵՐ  
ԱՐԱՅ ԵՒ ՏԻԿՆԱՅ  
ԵՒ ՉԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳՊՐՈՑ

Ապիսի մեծ պողոտային վայ Տայիթայի  
Սանիթի դիմացը, Եսիկին ելեկտրական  
գործիներու փանառ-ասուկը:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած  
հաստատուած ըլլալով կը յայտարա-  
րենք արդոյ հասարակութեան թէ՛  
պատրաստ ենք գոհացնել մեզ զիսկ  
Պատ. յաճախողները, գործի մնը-  
րութեան, զինքու չափաւորութեան  
և ճշգրտահաւթեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւան-  
դուին նաև ձեռագիտութեան դասեր  
ամերիկեան ամենավերջին կատարե-  
լաղօժուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար դիմել  
մեր գործատեղին:

ՃԱՇԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂՐ. ԳԱՋԱՆՃԵԱՆ  
Շար.ս. Ապու-Սապահ  
Նիւու-Տիւրքիսի ղեկավարին դիմացը.

Օգտուուն ու զուարճալի դիւր մու-  
քուր ու վայելելի սպաս. հասնող ու  
անկարար կերակուրներու զանազա-  
նութիւնն, անխարդախ պատրաստու-  
թիւն. ճօխ ճաշացուցակ մը դիւրա-  
մատչելի զինքուով ահա՛ Գալանձ-  
եան եղբարց ճաշարանը:

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ  
անգամ թող դիմէ, վստահ պէտք է  
ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի  
գաւանջ հոյակապ ճաշարանին:

**Տ Պ Ա Ր Ա Ն**

**Ի ԳԱՀԻՐԷ**

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹՅԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

**ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ**

**ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ**

Սոյն նորակազմ սպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատա-  
րակութիւններ, պարբերական թերթեր, յարտարարութիւններ, շրջաբերականներ, այցետուներ, մահազգեր,  
հարսանեաց հրաւիրագրեր, կանոնադրներ, նամակազուլներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն իմաստով և անշախտոյ սպազմութեամբ:

**ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ**